# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր N 1
# N ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Է-38
# ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** **<<    >> <<    >> 2026թ.**

**ՀՀ ներքին գործերի նախարարությունը,** ի դեմս ՀՀ ՆԳՆ գլխավոր քարտուղար **Տ.Ենոքյանի**, որը գործում է ՆԳՆ կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ՎԼԱԴՇԻՆ» ՍՊԸ**-ն, ի դեմս տնօրեն **Տ.Մուրադյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), հիմք ընդունելով 29.05.2026թ.-ին կնքված **ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Է-38** ծածկագրով գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 և 7.14 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան, գինը, վճարման կարգը և գործողության ժամկետը**

1. 1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Է-38 ծածկագրով գնման պայմանագրի 4.1 կետով սահմանված **1 352 850 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուներկու հազար ութ հարյուր հիսուն) ՀՀ դրամ գումարը**, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացվի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքի կատարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (    ) մեկ էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՆԳՆ:

**3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՆԳՆ
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
հեռ. 010 59-64-86
Էլ. Փոստ: gnumner@mia.gov.am

_______________ Տ. Ենոքյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)Կ.Տ

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ՎԼԱԴՇԻՆ» ՍՊԸ
հասցե՝ Ք. Երևան Երկաթուղայինների 3փ 12
Բանկ՝ ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570090241082400
ՀՎՀՀ 00543181
Հեռ: +37494179040
Էլ. Փոստ: deliverybox00@mail.ru

Ստորագրող
__ ՏԱԹԵՎԻԿ ՄՈՒՐԱԴՅԱՆ
6409850492

2026-06-09 08:54:31 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հավելված N 1
<<      >>      2026թ.
N ՀՀ ՆԳՆ ԳՀԱՇՁԲ-2026/Է-38
ծածկագրով գնման պայմանագրի թիվ 1 համաձայնագրի

## Վճարման ժամանակացույց

| աշխատանք | | | | | | | | | | | | | | | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին` ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 45461100/528 | ՀՀ ՆԳՆ ոստիկանության գվարդիայի ՊՊԿ վարչության տարածքում ընթացիկ շին-վերանորոգման աշխատանքներ | | | | | | 560 348 | 1 027 305 | 1 027 305 | 1 027 305 | 1 352 850 | 1 352 850 | 1 352 850 | 1 352 850 |

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ՆԳՆ
ք. Երևան, Նալբանդյան 130
ՀՀ Ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011042471
ՀՎՀՀ 02882913
հեռ. 010 59-64-86
Էլ. Փոստ: gnumner@mia.gov.am

_______________ Տ. Ենոքյան
/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար /
(ստորագրություն)Կ.Տ

Ստորագրող
ՏԻԳՐԱՆ ԵՆՈՔՅԱՆ
3408840229
2026-06-09 15:49:44 GMT+04:00
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ
«ՎԼԱԴՇԻՆ» ՍՊԸ
հասցե` Ք. Երևան Երկաթուղայինների 3փ 12
Բանկ` ԱՄԵՐԻԱԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 1570090241082400
ՀՎՀՀ 00543181
Հեռ: +37494179040
Էլ. Փոստ: deliverybox00@mail.ru

_______________ Տ.Մուրադյան
/տնօրեն/
(ստորագրություն)Կ.Տ